



Արարատյան բակալավրիատի քննական կենտրոն
ԱԲ ավագ դպրոցի ընդունելության քննություններ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Քննաշրջան՝ 2021 թ., ապրիլ
Տևողություն՝ 1 ժամ 15 րոպե
Հավելյալ նյութ՝ Պատասխանների գրքույկ

ՈՒՇԱԴԻՐ ԿԱՐԴԱԼ ԱՅՍ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ

Անհրաժեշտ է հետևել Պատասխանների գրքույկի կազմին գրված ցուցումներին:

Գրել մուգ կապույտ կամ սև գրիչով:

Պետք է պատասխանել բոլոր հարցերին:

Քննության վերջում բոլոր թղթերը հավաքել և հանձնել մեկ տրցակով:

Յուրաքանչյուր հարցի հնարավոր առավելագույն միավորը նշված է հարցի վերջում աջ կողմում:

Հարցերի միավորների ընդհանուր քանակը 32 է:

Այս փաստաթուղթը բաղկացած է 2 տպագիր էջից:

Սիրելի՛ դիմորդ, ստորև ներկայացվող հատվածը Գրիգոր Զոհրապի «Այրին» նորավեպից (նովելից) Է: Կարդա՛ այն և պատասխանի՛ր հարցերին:

Հայրենիքը, Չարդար, իր մանկամարդ կինը, կը սպասեր: Իրենց սուրբ պսակենի վեր հագիվ մեկ երկու ամիս Էրկանը¹ երեսը տեսած Էր, ու ստակ² վաստկելու աննահանջելի հարկը՝ հեռավոր երկիրներ առաջնորդած Էր զայն: Կը սիրե՞ր արոյոք այն երիտասարդը, որ իր ամուսինը եղած Էր. այն կույր ու անտրտունջ հնազանդության մեջ, որ հայուհիներու բոլոր կյանքը կը կազմե այդ կողմերը, ո՛չ խորհելու և ո՛չ զգալու տեղի մնացած Է. իրեն չԷին հարցուցեր երբեք, թե կ’ուզե՞ր այն մարդը, զոր իրեն սահմանած Էին. ինքն ալ չԷր մտածեր անոր վրա. ո՛չ կատեր և ո՛չ կը սիրեր զայն մինչև իր ամուսնության օրը: Եվ ամուսնութենեն ետքը այնչափ քիչ ատեն անցուցած Էր հետը, այնչափ մտերմութենե զուրկ, որ գրեթե պաշտոնական եղած Էին իրենց հարաբերությունները՝ միևնույն հարկին տակ բնակվող բազմաթիվ ազգականներու աններող նայվածքին տակ:

Այդ նոր ընտանիքին մեջ, ուր կը մտներ գլխավորապես ծառայության համար, ամենեն քիչ իր Էրկանը կը պատկաներ. վասն զի կեսրոջը, աներին, մյուս ազգականներուն սպասավորությունն Էր իր ավագ պարտավորությունը:

Այս գեղի աղջիկը գորովի և սիրո անսպառ գանձեր ուներ սակայն իր սրտին խորը, որոնք մեկ բառով, մեկ գգվանքով թերևս պիտի հայտնվեին: Բայց ավանդությունը կար իր աչքին առջև, իր ամուսին հորեղբայրներուն կիները կային, նույն իսկ իր կեսուրը կար դեմը, Պոլիս գացող մնացող ամուսիններու սպասելով, տանը անհատնում հոգերուն ու աշխատությանցը մեջ մաշելով ծերացած կիներ, հիմա գրեթե պառավներ, ճիշտ իրեն պես, նոր հարսի պես լռիկ ու խոնարհ՝ այդ մարդոց քով, որոնք հանկարծ, երկարատև տարիներե ետքը, հիշեր Էին, թե այդ դժբախտներուն ամուսիններն Էին իրենք ու հայրենիք վերադարձեր Էին, այլևս աննպատակ ու անօգուտ դարձած ամուսնական կյանքը շարունակելու:

¹ Էրիկ- 1. ամուսին 2. տղամարդ

² Ստակ – փող, դրամ

©«Այբ» կրթական հիմնադրամ

- | | |
|---|----------|
| 1. Գրի՛ր, թե ինչ տիտղոսով է հայտնի Գրիգոր Զոհրապը հայ գրականության մեջ, և բացատրի՛ր, թե ինչու են նրան այդպես անվանում: | 2 միավոր |
| 2. Նշի՛ր երկու ընդհանրություն և մեկ տարբերություն նորավեպի ու պատմվածքի միջև: Գրի՛ր երկուկան հեղինակի անուն հայ և համաշխարհային գրականությունից, ովքեր գրել են նորավեպեր: | 4 միավոր |
| 3. Գրի՛ր, թե հիմնականում գեղարվեստական որ մեթոդն է գործածել Գրիգոր Զոհրապը իր նորավեպերը գրելիս և թվարկի՛ր նրա հրատարակած նորավեպերի երեք ժողովածուների վերնագրերը: | 4 միավոր |
| 4. «Այրին» նորավեպում Զոհրապը ցույց է տալիս 20-րդ դարասկզբի արևմտահայ գյուղական ընտանիքի մոդելը : Ինչպիսի՞ն է այդ ընտանիքը, ինչպե՞ս են ձևավորվում կին-տղամարդ հարաբերությունները, ինչպիսի՞ն է ընտանիքի կազմը, նրա անդամների հարաբերությունները, և ինչպե՞ս է պանդխտությունն ազդում այդ հարաբերությունների վրա: Պատասխանդ հիմնավորի՛ր՝ ըստ վերը բերված հատվածի: | 5 միավոր |
| 5. Հատվածի համար գրի՛ր ամփոփում. քո բառերով շարադրի՛ր, թե ինչ է ասվում այդ հատվածում: Ամփոփման մեջ ներառի՛ր նաև քո մեկնաբանությունը: | 6 միավոր |
| 6. Ինչո՞վ է արդիական Զոհրապի «Այրին» նորավեպը. ի՞նչ զուգահեռներ ունի 20-րդ դարասկզբի արևմտահայ իրականության մեջ առկա պանդխտության խնդիրը ժամանակակից հայաստանյան իրականության հետ, ինչպե՞ս է այն ազդում ընտանեկան կյանքի վրա: | 5 միավոր |
| 7. Ի՞նչ է նշանակում «այրի» բառը. ինչու՞ է հեղինակը այս նորավեպը վերնագրել այդ բառով: Հիմնավորի՛ր պատասխանդ: | 4 միավոր |
| 8. Հատվածից դո՛ւրս գրիր մեկ մակդիր և մեկ համեմատություն: | 2 միավոր |

Պատասխաններ

1. Գրիգոր Զոհրապին անվանում են նաև «նորավեպի իշխան», քանի որ նա իր գրական վարպետությամբ նոր մակարդակի բարձրացրեց այդ ժանրատեսակը արևմտահայ գրականության մեջ: Զոհրապը կարողացավ ստեղծել իր ուրույն գրական աշխարհը՝ կենդանի նյութով ու լիարյուն կերպարներով: **2 միավոր**

1 միավոր - տիտղոսը նշելը

1 միավոր -տիտղոսին արժանանալու պատճառաբանումը

2. Նորավեպն ու պատմվածքը նման են նրանով, որ երկուսն էլ փոքր ծավալով գործեր են, գործողությունները ճյուղավորումներ չունեն, և հերոսների քանակը քիչ է: Իսկ հիմնական տարբերությունն այս երկու ժանրատեսակների միջև այն է, որ պատմվածքի դիպաշարը զարգանում է բնականոն, մինչդեռ նորավեպում գործողության զարգացումը արագ է, իսկ ավարտը՝ անակնկալ, հանկարծակի:

Նորավեպի ժանրը համաշխարհային գրականության մեջ փորձարկել են տարբեր հեղինակներ տարբեր ժամանակաշրջաններում, ինչպես օրինակ՝ Ջովաննի Բոկասչոն և Գի դը Մոպասանը:

Գրիգոր Զոհրապից բացի՝ հայ գրականության մեջ իրենց նորավեպերով հայտնի են նաև Նար-Դուր և Հակոբ Օշականը:

4 միավոր

2 միավոր – պատմվածքի ու նորավեպի երկու ընդհանրությունները

1 միավոր – պատմվածքի ու նորավեպի հիմնական տարբերությունը

0,25 +0,25 – 2 հայ հեղինակի անուն

0,25+0,25 – 2 օտար հեղինակի անուն

3. Գրիգոր Զոհրապն իր նորավեպերը գրելիս գործածել է իրապաշտական մեթոդը, որը ներկայացնում է կյանքն այնպես, ինչպես որ այն կա: Եվ Զոհրապի նորավեպերի ժողովածուներից մեկը՝ «Կյանքն ինչպես որ է», իր վերնագրով կարծես հիշեցնում է հեղինակի նախընտրած մեթոդը: Մյուս երկու ժողովածուների վերնագրերն են՝ «Խղճմտանքի ձայներ» և «Լուռ ցավեր»:

4

միավոր

1 միավոր – գեղարվեստական մեթոդ

3 միավոր – 3 ժողովածուների վերնագրերը

4. Ըստ «Այրին» նովելից մեջբերված այս հատվածի՝ 20-րդ դարասկզբի արևմտահայ գյուղական ընտանիքը ավանդական է, որտեղ կնոջ իրավունքները սահմանափակ են. նա «կույր ու անտրտունջ հնազանդության մեջ» է, չունի ընտրության իրավունք: Երիտասարդները ամուսնանում են՝ առանց միմյանց ճանաչելու, քանի որ ոչ թե անհատներն են որոշում կայացնողը, այլ ընտանիքները: Ամուսնությունից հետո էլ կինն ու տղամարդը իրար ճանաչելու հնարավորությունից զրեթե զրկված են: Զոհրապը իր նորավեպի ամուսնական զույգի մասին ասում է. «գրեթե պաշտոնական եղած էին իրենց հարաբերությունները՝ միևնույն հարկին տակ բնակվող բազմաթիվ ազգականներու աններող նայվածքին տակ»: Այս մեջբերումը ցույց է տալիս, որ ընտանիքները բազմանդամ են, բազմաթիվ ազգականներ ապրում են միևնույն տան մեջ և ազդում միմյանց կյանքի վրա: Ընտանիքի անդամները չունեն հավասար իրավունքներ. կանայք ենթակա են տղամարդկանց, վերջիններիս առաջ «նոր հարսի պես լռիկ ու խոնարհ» են անգամ հասակավոր, ծեր կանայք: Սակայն ամենաթույլ դիրքում երիտասարդ հարսն է, ով ենթակա է ամբողջ ընտանիքին: Զոհրապի տողերը վկայում են, որ նա ծառայի, սպասարկողի դերում է. «Այդ նոր ընտանիքին մեջ, ուր կը մտներ գլխավորապես ծառայության համար, ամենեն քիչ իր երկանը կը պատկաներ. վասն զի կեսրոջը, աներին, մյուս ազգականներուն սպասավորությունն էր իր ավագ պարտավորությունը»: Այս հարաբերությունների վրա ազդում է նաև ժամանակի գլխավոր խնդիրներից մեկը՝ պանդխտությունը: Ընտանիքի սոցիալական խնդիրները լուծելու համար տղամարդիկ տարիներով հեռանում են գյուղից, գնում են քաղաք, հիմնականում՝ Պոլիս՝ գումար վաստակելու: Տան, կենցաղի ամբողջ հոգսը ընկնում է կանանց վրա: Նրանք այդ բեռը կրում են՝ չմտածելով անգամ բողբոջելու, տրտնջալու մասին, քանի որ սերնդեսերունդ նույն բանն են տեսնում ու այլ բան չեն պատկերացնում: Երկարատև պանդխտությունը խլում է ամուսիններից միմյանց հետ ապրելու, կյանքը կիսելու հնարավորությունը, և այդպիսով ավելի է խորանում կանանց ու տղամարդկանց հարաբերությունների անդունդը:

5 միավոր

©«Այբ» կրթական հիմնադրամ

©Արարատյան բակալավորիտի ցննական կենտրոն

1 միավոր - ընտանիքի տիպը

1 միավոր – կին-տղամարդ հարաբերությունների ձևավորումը

1 միավոր – ընտանիքի կազմը

1 միավոր – ընտանիքի անդամների հարաբերությունները

1 միավոր – պանդխտության ազդեցությունը

6. «Այրին» նովելում քննարկվող պանդխտության խնդիրը, ցավոք, առկա է նաև ժամանակակից Հայաստանի կյանքում: Այսօր էլ սոցիալական անապահով վիճակը մղում է մարդկանց՝ գնալու արտերկիր՝ փող վաստակելու համար: Հիմնականում արատագնա աշխատանքի են մեկնում տղամարդիկ՝ այստեղ թողնելով իրենց կանանց, երեխաներին, ծնողներին: Ու ինչպես 20-րդ դարասկզբի արևմտահայ իրականության մեջ, այնպես էլ այստեղ՝ Հայաստանում, տան, կենցաղի, երեխաների ու ծնողների խնամքի բեռը ընկնում է կնոջ ուսերին: Ամուսինները ամիսներով, երբեմն տարիներով ապրում են իրարից անջատ, ինչը հիմք է դառնում գժտությունների ու բաժանությունների: Ընտանիքի ոչ լիարժեք վիճակը վատ է անդրադառնում ոչ միայն ամուսինների, այլև երեխաների հոգեբանության, հետագա կյանքի վրա:

2 միավոր – զուգահեռներ 20-րդ դարասկզբի պանդխտության և այսօրվա արտագնա աշխատանքի միջև

3 միավոր – արտագնա աշխատանքի ազդեցությունը ընտանեկան կյանքի վրա

7. «Այրի» բառը նշանակում է ամուսինը մահացած և այլևս չամուսնացած կին կամ տղամարդ:

Զոհրապի նորավեպում այս բառը նկարագրում է հերոսուհու վիճակը. նա ընդամենը երկու ամիս էր ապրել իր ամուսնու հետ, ապա ճամփել էր նրան Պոլիս և մնացել սպասելով: Չվերադարձող ամուսինը ակամայից այրի էր դարձրել Զարդարին: Զոհրապը այս վերնագրով կարծես ուզում է շեշտել կնոջ ողբերգական վիճակը: Թեև կենդանի է ամուսինը, բայց իր բացակայությամբ այրիացրել է կնոջը: **4 միավոր**

2 միավոր – «այրի» բառի բացատրությունը

2 միավոր – նորավեպը «այրի» բառով վերնագրելու պատճառը

8. Պատկերավորման միջոցներ **2 միավոր**

1 միավոր -մակդիր

կույր ու անտրտունջ հնազանդություն

գորովի և սիրո անսպառ գանձեր

1 միավոր - համեմատություն

....ծերացած կիներ, հիմա գրեթե պառավներ, **ճիշտ իրեն պես, նոր հարսի պես լռիկ ու խոնարհ.....**